

1836
ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե 1961 թ.

Ը 89 683
4657

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԻ 1936 թ.

**ՊԱՐՏԱԴԻՐ ԶՈՈՎԵՏ
ԿԱՆՈՆՆԵՐ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԵՄԴԻՐ
ԿՈՍԻՏԵՅԻ 1936 թ. 11/3 ՆԱԽԱԳԱՀ.
ՆԻՍՏՈՒՄ



Կիրովականի ասպարան

Ֆլավիանի լիազոր № Ա. — 324

Պատվեր № 231

636 (47.925)

4-


ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԻ 1936 թ.

ՊԱՐՏԱԴԻՐ ԶՈՈՎԵՏ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ԿՈՄԻՏԵՅԻ 1936 թ. 11/3 ՆԱԽԱԳԱՀ.
ՆԻՍՏՈՒՄ

A 3601

Սոցիալիստական անասնապահության վե-
րելք ստեղծելու, անաստունների քանակա-
կան և վորակական բարձր ցուցանիշներ
ձեռք բերելու, մթերատվությունը բարձրա
ցնելու, բոլոր տեսակի հիվանդություննե-
րից զերծ պահելու և անասնակերով ու ա-
րոտավայրերով ապահովելու համար ԿԻՐՈ-
ՎԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻ
ՏԵՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ Ե ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՐՏԱԴԻՐ
ԶՈՈ-ԱՆՍՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ (ԶՈՈ-ՎԵՏ) ԿԱ-



ՆՈՆՆԵՐԸ անասունների խնամքի և պահպանման վերաբերյալ:

1. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒՄԸ,—

1. Կոլտնտեսական ֆերմաններում անասունների համար շենքերի դրությունը, հատկացված հողամասերում նոր շենքերի դատավորումը կատարվում է Շրջ. հողբաժնի թույլատվությամբ (շինարարական, տեխնիկական, Զոռ-տեխնիկական և անասնաբուժական հսկողությամբ)

2. Արդելվում է այն տերիտորիայում, վորտեղ տեղավորված են անասունների համար շենքեր, կառուցել անասունների սպասարկման հետ անմիջական կապ չունեցող բնակիչ և անտեսական շենքեր:

3. Նախապես ուրիշ նպատակի համար ծառայած շենքերը անասունների համար ոչ տաղործել թույլատրվում է միմիայն այդ շենքերն ախտահանելուց և հարմարեցնելուց հետո:

4. Յուրաքանչյուր խորհ. տնտեսությունում և կոլտնտեսական ապրանքային ֆերմաններում պետք է ունենալ հատուկ կահափորված ծննդարաններ:

5. Ծննդարանները՝ կովերի, զամբիկների մաքրիների և խոզերի մասսայական ծննդաբերութունը սկսվելուց առաջ՝ պետք է խընամքով մաքրվեն ու ախտահանվեն: Բացի այդ, յուրաքանչյուր ծննդաբերությունից հետո խոզերի բաժանմունքները և մյուս կենդանիների կանգնած տեղերը պետք է ախտահանվեն:

6. Հիվանդ և վարակիչ հիվանդութուն ունենալու մեջ կասկածելի կենդանիներին առանձնացնելու համար, կոլտնտեսական ֆերմաններում և խորհ. տնտեսություններում կառուցել կամ հատկացնել հատուկ շենքեր (մեկուսարաններ):

7. Մեկուսարանները շինվում են գոմերից, վոչխարանոցներից և խոզանոցներից, բանուկ ճանապարհներից, ջրելու տեղերից ու բնակարաններից 200 մետրից վոչ պակաս հեռավորության վրա:

Հիվանդ կենդանիներին սպասարկելու համար մեկուսարաններին հատկացվում է առանձին աշխատող և ինվինտար:

8. Յուրաքանչյուր տարի, նախքան անասունների մսուրային շրջանին անցնելը պետք է կատարել շենքերի (նորոգում, սվաղել սպիտակեցնել, ապակիները գցել և այլն):

9. Կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում և խորհանտեսաթխուներում, անասունների բոլոր շենքերը պետք է ունենան բաժանմունքներ, մսուրներ, վանդակներ հորթերի համար, կապեր, դույլեր, լապտերներ (ֆանատներ) և ուրիշ անհրաժեշտ ինվինտարներ:

10. Անասունների գոմերը պետք է պահվեն մաքուր, ամեն ոք գոմադրը դուրս տանել, անասունների տակը չորացնել չոր ցամաքարով:

11. Անասունների բոլոր գոմերը տարվա մեջ վոչ պակաս քան չերկու անգամ պետք է հիմնական մաքրման և ախտահանման յենթարկել (կրով սպիտակեցնել և գոլ ջրով լվանալ): Դա պետք է կատարել աշնանը՝

անասունների մտուրային շրջանը սկսելուց
առաջ և զարնանը: Միաժամանակ պետք է
մաքրել ֆերմայի բնակելի շենքերի ու գո-
մերի տարածության վրա կուտակված աղ-
բը:

12. Անխտիք բոլոր անասնագոմերում ու-
նենալ ջերմաչափեր:

13. Անասունների գոմերի ջերմաստիճա-
նը պետք է պահել 10-12 աստիճանի (ցել-
սուսով) սահմաններում, խողանոցներում,
հորթամոցներում և ծննդարաններում 12-ից
մինչև 15 աստիճան (ցելսուսով):

14. Անասունների սպասարկման հետ կապ
չունեցող անձնավորություններին գոմեր
այցելելը թույլատրվում է ամեն անգամ
ֆերմայի վարիչի, անասնարուժակի կամ
անասնապահ տեխնիկի կողմից:

15. Բոլոր խորհ. անտեսությունները և
կոլտնտեսական ապրանքային ֆերմաները
պետք է ապահովված լինեն անհրաժեշտ հա-
կահրդեհային կահավորումով (տակառներ,
դույլեր, սանդուխտներ, կարթածողեր, կա-
ցիներ, հրդեհաշեջներ և այլն) հրդեհային

պաշտպանութեան ցուցմունքներէ համա-
ձայն:

16. Չմեռանոցներում անասունները պետք
է ապահոված լինեն համապատասխան գոմե-
րով և կերերով:

17. Արգելվում է ծխել բոլոր գոմերում,
պահեստներում, խոտի ծղնոտի, գեղերի յեւ
դարմանանոցների մոտ:

2. ԱՐՈՏԱՏԵՂԵՐԸ ՅԵՎ ՆԱԽԻՐՆԵՐԻ ՃԱՆԱ ՊԱՐՀՆԵՐԸ.—

1 Բոլոր արոտատեղերը և ճանապարհնե-
րը նախքան անասուններին ախտեղ քշելը
անպայման պետք է նայվեն և մաքրվեն
դիակներից, վոսկոտներից և աղբից: Աշնանը
և դարնանը պետք է մաքրել և նորոգել
աղբջուրները, ջրամբարները, ջուր խմելու
նավերը, կարգի բերել ջուր վերցնելու տե-
ղերը (ամրացնել, մաքրել աղբջուրների շուր-
ջը գտնվող հրապարակները և գետերի
ափերը) և մշտական հսկողութուն սահ-
մանել արոտատեղերի և ջրատեղերի վը-
րա:

2. Գլուղերին և ձմեռանոցներին կից հարավային քամիներից պաշտպանված տեղերում առանձնացնել ուշ աշնան և ձմեռվա համար հարմար արտատեղերը, վորտեղ տարվա մյուս ժամանակներին՝ անասուն արածացնելը խստիվ արգելել:

3. Մինչև վ արտաային սեղոնի սկիզբը անառնության ունեցած բոլոր արտատեղերը բաշխել նախիրների վրա:

Արտատեղերը առանձին նախիրների վրա բաշխելիս ամենամոտիկ և վորակով ամենալավ արտամասերը հատկացնել ծծող հորթերին, հղի կովերին (հղիության վերջին շրջանում) և արտադրող զուլերին: Ավելի հեռավոր և վորակով վատ արտամասերը պետք է բաշխել անասունների ցածր խմբերի՝ ստերձ կովերի և սուբան անասունների միջև. ծծմայր մերունների, Ջխոձկորների և գառների համար ֆերմաներին մոտիկ հատկացնել հատուկ արտամասեր:

4. Սանձանի արտատեղերի արածացնելու հերթականությունը ստ ժամկետներին:

5. Արտամասերը բաշխելիս անպայման պետք է ինկատի ունենալ՝

ա) արտամասերի ապահոված լինելը բավարար ջրերով:

բ) Կթու Անասունների ամբողջ արտառային սեզոնում, առանձին արտամասերը քաշելու նպատակահարմարությունը:

գ) Վարակիչ հիվանդություն ունեցող անասուններին պետք է հատկացնել առանձին արտամասեր՝ ջրատեղերով:

ԾԱՆՈԹ ՈՒԹՅՈՒՆ.— Հիվանդ անասունների համար արտատեղ է հատկացվում այն հաշվով, լոր նրանք չ'անցնեն առողջների արտամասերը և նրանց հետ չ'ընկնեն:

Արտառային սեզոնը սկսվելուց 15-20 օր առաջ Հովիվներին, տավարածներին՝ ձիապաններին, խոզարածներին և նրանց ոգնականներին պետք է ծանոթացնել անասունների արտառային հիվանդություններին, կենդանիների առաջին ոգնությունը ցույց տա-

լ-ւ. կանոններին, մնասակար և թունավոր բույսերին, արտոնների ոգտագործման տեխնիկայի հետ և այլն:

7. Անասուններին մինչեւ արոտ բաց թողնելը, պետք է կատարել հետեւյալը՝

ա. Բոլոր կենդանիներին չենթարկել անասնարուժական քննության, հիվանդ չեւ կասկածելի անասուններին առանձնացնել մեկուսաբաններում:

բ. Սղոցել հարու տվող անասունների յեղջուրների ծայրերը:

գ. Բոլոր լղար չեւ հյուժված կենդանիներին ջոկել, առանձին արածացնել մինչեւ նրանց կազդուրվելը:

դ. Մնացած բոլոր անասուններին բաժանել նախիրների՝ ըստ արտադրանքի, տարիքի չեւ սեռի (կթու տավար, սուբահ, մինչեւ մեկ տարեկան հորթեր, 1-2 տարեկան մատղաշներ, ցուլեր չեւ այլն):

յե. Բոլոր անասունների մարմնի վրայից հեռացնել կաշվու բոռերը:

8. Ձի թույլատրվում անասուններին արածացնել բանուկ ճանապարհներին անաս-

նապերեզմանոցների մտախի տեղերում յեմ
այն տեղերում, վորտեղ անասնաբուժական
հսկողութեան կողմից հաշտարարված են վա
րակիչ հիվանդութեանները տեսալետից
անապահով վայրեր:

9. Նախապանները (բրիգադիրները, ձի-
ապահները, ավագ չորանները, խողապահ-
ները) պարտավոր են անասունները արոտ
քշելուց առաջ գյուղխորհուրդներից և ա-
նասնաբուժներից տեղեկանքներ վերցնել
տվյալ տեղի անասնասանիտարական ապա-
հովութեան մասին:

10. Մտուրաչին շրջանից արոտային շրջ-
ան անցնելը պետք և կատարվի մոչ թե
միանգամից, այլ աստիճանաբար, 10-12 ու
վա ընթացքում. առաջին օրերը անասուն-
ներին պետք և դուրս բերել 2-3 ժամ, ա-
պա արոտում նրանց մնալու ժամանակամի-
ջոցը աստիճանաբար ավելացնել 1-2 ժա-
մով: Ամբողջ անցողիկ շրջանի ընթացքում
անասունները պետք և լրացուցիչ կողիա
կեր ստանան, վորի քանակը պետք և աս-
տիճանաբար պակասեցնել:

11. Անաստուճների գիշերային արածացու-
մը պարտադիր և բոլոր խորհանտեսու-
թյուններին և կոլխոյ ապրանքային ֆեր-
մաների համար:

38 ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔՆ ՈՒ ՊԱՀՊԱ-
ՆՈՒՄԸ.—

1. Անաստուճների մսուրային շրջանն ըս-
կսերուց առաջ կատարել անասնարուժական
յեզվ գոտ-տեխնիկական քննում, (տոհմային
արտադրական նպատակների համար ան-
պետք - անաստուճների խտանում բրակով-
կա):

Դրանից հետո անաստուճները բաժանել
խմբերի՝ ըստ սեռի, հասակի, տոհմական
հատկությունների, յեզվ ըստ արտադրական
բնույթի տեղավորել գոմերում:

Գոմում յուրաքանչյուր անաստուճի համար
մշտապես հատկացնել վորոշ տեղ:

2. Կենդանիներին խնամելու յեզվ կերակ-
րելու համար նշանակվում և մշտական աշ-
խատող անձնակազմ:

3. Ամեն ոք մաքրել անաստուճներին խո-

զանակով (չոտակով), կեղտոտված տեղերը լը-
վանալ գոլ ջրով, իսկ ձիերի նկատմամբ
բացի դրանից մաքրել նաչեզ սմբակները:

4. Մեռել աշին շրջանում անա-
սուններին ամեն որ դուրս բերել դրոսանքի
2-3 ժամով, բացառութեամբ շատ ցուրտ և
վատ չեղանակների (անձրեզ, քամի):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Հղիութեան վերջին
շրջանում կովերին յեզ խոզերին դրոսանքի
հանել ընդհանուր նախիրներից առանձին:

5. Թույլատրվում և ձիերին լողացնել
միմիաչն տարվա տաք չեղանակներին (ար-
գելվում և լողացնել հիվանդ չեզ քրտնած
ձիերին):

6. Տնտեսութեան մեջ նոր բերված բոլոր
անասունները պետք և կարանտինաչի յեն-
թարկել 15 որից վոչ պակաս, ձիերին չեզ
խոզերին 21 որ:

Կարանտինաչի համար հատկացվում և ա-
ռանձին դոմ չեզ արոտավայր:

7. Կարանտինի ժամկետը վերջանալուց
հետո անասուններին յենթարկել քննութ-
յան, չեզ հիվանդութեան բացակայութեան

դեպքում, անասուներին տանել ընդհանուր նախիր:

8. Կարանտինայում գտնվող անասունների սպասարկելու համար նշանակել առանձին սպասարկող պերսոնալ, հատկացնել առանձին ջրելատեղ և խնամքի առարկաներ:

Կարանտինայում գտնվող անասուններին սպասարկող անձանց չ'պետք է թողնել, վոր մտնեն տնտեսության անասունների ընդհանուր գոմերը չեվ վոչ ել շփման մեջ լինեն կերերի ընդհանուր պաշարի հետ:

9. Գյուղերի սանձաններից դուրս (շուկա, տոնավաճառ, ցուցահանդես և այլն) անասուններ տանելու դեպքում, կոլտնտեսության վարչությունը, խորհտրնտեսության գիրեկցիան, կոլտնտեսականներն ու մենատնտեսները պարտավոր են անասնարուժից ստանալ վկայական աչմասին, վոր ավյալ տնտեսությունն ու վայրը վարակիչ հիվանդություններից ապահով են:

10. Խորհանտեսությունների, կոլխոզ ֆերմաների, կոլտնտեսականների, մենատնտեսու-

ների նախիրներում հետեւյալ նշաններ՝
հազ, քթից ջուր թափվել, թուք թափվել,
այրուհամեղ առաջ դալը, ուռուցներ, վի-
ժումներ չեւ (անասունների), հանկարծակի
սատկելու դեպքում խորհանտեսու-
թյան դիրեկցիան կոլտնտեսութեան վար-
չութեանը, կամ գյուղխորհուրդը պարտա-
վոր են անմիջապէս կանչել անասնաբուժին՝
հիվանդութեան բնույթը (դիագնոզը) վորո-
շելու և միջոցներ ձեռք առնելու համար:

Հիվանդ անասուններին անմիջապէս
պետք է առանձնացնել առողջներից յեւ
տանել մեկուսարան:

11. Հիվանդ կենդանու կանգնած տեղը
անպայման ախտահանել: Այդ տեղից վեր-
ցրած աղբը չեւ ցամքարը այրել շենքե-
րից յեւ ճանապարհներից հեռու տեղում,
չ'այրված մնացորդները թաղել հողի մեջ:

12. Բոլոր գյուղերում, ձմեռանոցներում
ամառային արտավայրերում կառուցել ա-
նասնադերեկամանոցներ: Անասնադերեկա-
մանոցը պատրաստվում է բոլոր բնակելի շեն-
քերից մեկ կիրտեառ հեռավորութեան վրա,

(ճանապարհից ջրատեղից և արոտատեղերից հեռու):

Կորունտեսական ապրանքային ֆերմաները և խորհանտեսությունները պետք է ունենան անասնաբուժական դեղարկղ (ապտեչկա) դեղերը գործածելու կանոնների հետ միասին:

13. Սատկած կենդանու դիակը անմիջապես պետք է փոխադրել անասնադերեղմանոցը:

Վիժած պտուղը, ընկերքը և սատկած հորթերի դիակները պետք է պահել նրանց համար հատկացված տեղերում, մինչևի պանասնաբուժի կամ անասնաբուժակի դալը:

14. Պետք է ամառվա ընթացքում կովերին յեվ հորթերին լողացնել՝ կովերին 1-2 անգամ, հորթերին 2-3 անգամ:

4. ԶՈՒԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ (ՊՄՅՔՄՐ ՍՏԵՐՃՈՒԹՅԱՆ ԴԵՄ) ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԾՆՈՒՆԴԸ ՅԵՎ ԴԱՍՏԻՍՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

1. Կենդանիների զուգավորումը պետք է կատարվի նախապես կազմված պլանի համաձայն:

889 7654
1591 688

A 3601 1097

ՀԱՍՏ
ԿԵՆՏՐՈՆԱԿԵՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

17
ՀԱՍՏ
ԿԵՆՏՐՈՆԱԿԵՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

2. Մալրական կազմը լրիվ կերպով և ժա-
ժանակին ծածկելու նպատակով խորհանու-
սությունները, կտրանտեսությունները և
գյուղխորհուրդները պետք և ունենան՝

ա. Ձեռնաքաշ գուգավորման գեպքում,
յուրաքանչյուր 60-70 կովի յեվ չերինջի
համար մեկ հատուն ցուլ, յուրաքանչյուր

40-50 դամբիկի համար 1 հովատակ

— « — 40-50 մաքուն մեկ խոչ (դոչ)

— « — 20-25 մերունին մեկ վարազ

բ. Աղատ և յերեմակային գոգավորման
գեպքում 20-25 դամբիկի համար մեկ հա-
տուն հովատակ, 30-40 կովի համար մեկ
հատուն ցուլ, 25-30 մաքու համար մեկ խոչ
(դոչ) 10-15 մերունի համար մեկ վարազ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յերիտասարդ ար-
տաղբողներին, վորոնք առաջին տա-
րին են բեղմնավորում, արվում և
հատուն արտաղբողի բեռնվածու-
թյան կեսի չափով:

3. Կտրանտեսականների յեվ մենատըն-
տեսաների նախիրներին սպասարկելու հա-

մար բոլոր գյուղերում կազմակերպել մըշտական ցուրակաչաններ, վարոնք պետք և սպահոված լինեն անհրաժեշտ թվով արտադրողներով:

4. Թուլլատրվում և զուգավորել.

ա. Հովատակներին չեզ զամբիկներին 3 տարեկան հասակից:

բ. Արտադրող ցուլերին 1,5 տարեկանից

գ. Իսկ եզ հորթերին 2,5 տարեկան հասակում:

Նայած ցեղաչին չեզ տոհմային հատկություններին՝

դ. Վարազներին 10-12 ամսական:

յե. Մերուններին 9-12 ամսական:

զ. Խոյերին (դոշ) 1-1,5 տարեկան:

ե. Եզ գառներին 1-1,5 տարեկանից

5. Տավարի, խոզերի, զամբիկների և վոշխարների զուգավորումը սոց-սեկտորում պետք և կատարել ձեռնաքաշ: Վոշխարների ազատ զուգավորումը թուլլատրվում և կոլտնտեսականների յեզ մենատնտեսների նախիրներում: 2-3 արտադրողներ (բացառությամբ հովատակներից) բաց թողնել

ընդհանուր նախքի մեջ մասսայական զուգավորումը վերջացնելուց հետո:

6. Բուռցելիոզով (վարակիչ-վիժումով) հիվանդ մայրերը պետք է սահմանափակ առանձին նախրում բուրրովին մեկուսացած առողջ նախրից չեվ ծածկվեն առանձին արտադրողներով, վորոնք նույնպես բուրրովին մեկուսացած պետք է լինեն առողջ նախրից:

7. Զուգավորման կամպանիայից 1-2 ամիս առաջ բուրր արտադրողներին չեն լրջար մայրերին, վորոնք պետք է զուգավորեն, կերակրել խտացրած կերով յեվ լավ խոտով:

8. Զուգավորված կենդանիների գրանցումը (հաշվառումը) պետք է կատարել ծածկելու որը, ձիերինը ծածկելու յեվ գամրիկի ծածկվելուց հրաժարվելու որը:

9. Հղի մայրերի նկատմամբ պետք է ուշադիր խնամք տանել: Զի կարելի հղի մայրերին քշել սայթակուն ճանապարհով, իսկ ձմեռը սառուցի վրայով: Հղի մայրերին

ներս տանել չեմ դուրս քշել փոքր խմբերով ընդհանուր նախրից տոանձին:

10. Ծնելուց 1-2 ամիս առաջ հղի կովերը պետք է ցամաքացնել:

11. Կոլտնտեսական ֆերմաներում, խորհարնատեսուլթյուններում ծնի ժամանակը մոտենալիս՝ հղի մայրերին տեղավորել հատուկ ծննդարաններում.

ա. Զամբիկներին յեմ կովերին 5-10 որ առաջ

բ. Մերուններին 10-15 որ առաջ

գ. Վոչխարներին 1-2 որ առաջ

12. Ծննդարաններում սահմանել ամբողջ որվա (դիշեր ցերեկ) հերթապահուլթյուն ծնած կենդանիների ընկերքն անմիջապես հեռացնել դոմից և հոտից:

Արգելվում է ընկերքով (ծինը) կերակրել շներին, թռչուններին յեմ խոզերին:

13. Հորթի սատկած ծնվելու և վիժումների բոլոր դեպքերում անմիջապես պետք է արտահանման յենթարկել այն տեղը, ուր տեղի չե ունեցել վիժումը (խիտ կրաջրով, պատրաստված նոր հանդցրած կրից),

խիկ ցամբարը ու գոմաղըը այրել կամ թա
ղել.

14. Վիժած մայրերին պետք է անմիջա-
պես ընդհանուր գոմերից փոխադրել մեկու-
սարան:

15. Նորածին քուռակները ծնելուց հետո
առաջին 3 որը պետք է պահեն ձիերի ձը-
նընդարանում մայրերի հետ միասին: Հոր-
թերը տեղափոխվում են հորթանոց չեվ
պահվում են առանձին վանդակներում,
խոճկորները (գոջիները) դրվում են արկղի
մեջ չեվ ամեն 2 ժամը մեկ անգամ ցերեկ
ու գիշեր տարվում են մերունի մոտ ծծելու
համար, իսկ գառները առաջին 2—5 որը
պահվում են մայրերի հետ միասին:

16). Մատղաշների գոմերը պետք է մաք-
րել, ցամբարը փոխել որվա մեջ վոչ պակաս
քան 2 անգամ:

17). Խոջկորները 10 որական հասակից
պետք է ստանան հատիկային կեր, իսկ լը-
րացուցիչ խտացրած կեր պետք է տալ 3
ամսական հասակից: հորթերին 15 որական
հասակից:

18). Քուռակներին ծծից պետք է կտրել միանգամից, վոչ թե աստիճանաբար՝ 4-6 ամսական-հասակից, Գոջիներին ծծից կրտրել աստիճանաբար 4-6 որվա ընթացքում 2 ամսական-հասակից, իսկ գառներին 4 ամսական հասակից նմանապես աստիճանաբար՝ 10-15 որվա ընթացքում:

19). Մսուրային խնամքի շրջանում մատ դաշները ամեն որ պետք է դրոտանքի դուրս բերվեն, բացառությամբ շատ ցուրտ և վատ յեղանակներից:

20). Յուլիկներին ևգ հորթերից անջատել և առանձին պահել 5 ամսական հասակից, խոջկորներին ըստ սեռի բաժանել 4 ամսական հասակից, գառները ծծից կտրելու մոմենտից (4 ամսական): Քուռակներին ծծից կտրելուց հետո 5 ամսական հասակում:

5. ԱՆՍՍՈՒՆՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՅԵՎ ՉՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1). Կերը ծախսել խիստ խնայողությամբ, ճիշտ կշռված ըստ որացուցային պլանի, յուրաքանչյուր տեսակի անասունների համար

սահմանված նորմաներով: Կերի ծախսման պլանը պետք է կազմեն Զոո—տեխնիկները, կամ ննամնապահ տեխնիկները, իսկ նորմաները պետք է հաստատեն կոլտնտեսուիթյան վարչությունները, խորհանտեսութուններում՝ դիրեկտորները:

2). Մինչեւ ճանապարհների փակվելը գոմերին մոտիկ պետք է փոխադրել կերերը, խորհ. տնտեսություններում և կոլտնտեսություններում պետք է ունենալ 10-15% -ի չափով ապահովագրական կերի ֆոնդ:

3). Հորերից, խրամաաններից և կիսաաշտարակներից սիլոս պետք է հանել առտիճանարար, խրամաաթի միջից սիլոսը պետք է հանել ուղղահասցայ շերտով՝ վերեվից մինչեւ հատակը, սկսելով խրամաանների մի վորեվե ծայրից. յուրաքանչյուր որը հանվելիք սիլոսի շերտի հաստությունը չ'պետք է աՎելի լինի մեկ անգամ կամ որովա պահանջից:

4). Արգելվում է ստուած և բորբոսնած սիլոսով կերակրել անասուններին:

5). Անասուններին պետք է կերակրել ո-

րական 3 անդամից վոչ պակաս, ներքին կարգ ու կանոնով, սահմանված ժամերին. Խնասուճաններին կերակրել մսուրներում և կերասեղանների վրա:

6). Անասուններին արմատապարապտուղներ տալուց առաջ մաքրել, լվանալ ու մանրացնել:

7). Չի կարելի անասուններին կերակրել վատորակ, բորբոսնած և նեխված կերով:

8). Կափորակ կերեր պետք է առանձնացնել և առաջին հերթին կերակրել նորածին մատղաշներին, հզի ծծմալը կենդանիներին, ձիերին և արտադրողներին:

9). Մատղաշների ուցիոնի (կերարաժնի) մեջ անպայման պետք է Վտցնել հանքային աղեր (աղ, կալիճ, վոսկրի ալյուր և այլն):

10). Չի թույլատրվում անասուններին բաց թողնել արած աղնելու մատղաշ-յերեքնուկի և առվույտի դաշտերում շաղի ժամանակ:

11). Չմեռը, ծնած կովերին, մատղաշներին հյուժված անասուններին պետք է ջրել գոմի ջերմաստիճան ունեցող գոլ ջրով, դրա համար կենդանիների խմելու ջու-

ըրպեսք ե բերել նախորդ որը, լցնել գո-
մերում տեղավորված մաքուր տաշտերի կամ
տակաոնների մեջ և բերանները ծածկել, իսկ
խոզերի և վոչխարների խմելու ջուրը պատ-
րաստել կերի նախասպատրաստման շենքում:

12). Չմեռը անասուններին պետք է ջը-
րել որակյան վոչ պակաս քան 2 անգամ, իսկ
ամառը՝ 3-4 անգամ:

13). Խստիվ արգելվում է առանց անաս-
նաբուժական հսկողության և թույլատվու-
թյան կերերը բերել այն տեղերից ու տըն-
տեսություններից, վորոնք վարակիչ հիվան-
դությունների տեսակետից ապահով չեն:

14). Արգելվում է անասունների կերը պա-
հել մարդկանց արտաքնոցներին մոտիկ տե-
կրում:

15). Արգելվում է կենդանիներին ջրել
կանգնած, լճացած ջրերից և ջրափոսներից,
աղբյուրների գոբըրը պետք է մաքրեն առ-
նվազն ամիսը 2 անգամ, արգելվում է աղ-
բյուրներում լվացք անելը:

6. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾ ՈՒՄԸ

1). Բանող կենդանիների ճիշտ ոգտագործումը կազմակերպելու համար, ձիերին յեղններին բաժանել խմբերի ըստ աշխատունակության. հող բաժինն այս խմբերից, չուրաքանչյուրի համար պետք է սահմանի արտագրանքի նորմաններ՝ ըստ աշխատանքի հիմնական տեսակների:

2). Յեղները և ձիերը աշխատանքից վերադառնալուց՝ ձիապահն ու յեղնապահն պարտավոր են նրանց լավ ստուգել՝ կենդանիների մարմնի վրա զարկվածի հարվածի տեղերը, կամ ուրիշ հիվանդությունները և պակասությունները նկատելիս, ձիապահն ու յեղնապահն անմիջապես այդ մասին պետք է հայտնեն բրիգադիրին, վորպեսզի նա միջոցներ ործադրի:

3). Բանող անասուններին շարաթվա մեջ մեկ որ հանգիստ պետք է տալ: Հիմնական գյուղատնտեսական աշխատանքները սկսելուց թուաջ (գարնանացան բերքահավաք) պետք է տալ յերկարատեվ հանգիստ և ու-

ժեղացնել կերակրումը 10-15 որ, իսկ հյուծ-
վածներին՝ 20-30 որ:

4). Բանող անասունները աշխատանքի
դուրս գալուց առաջ, պետք է նալվեն հա-
տուկ կանոններով: Արգելվում է հնարված ա-
նասունները բանեցնել նամանավանդ քարքա-
րոտ տեղերում: Ձիերին պետք է նալել յու-
րաքանչյուր մեկ և մեկ ու կես ամիսը մեկ
անգամ, բանող անասունները գոմերում յեր
կարատե հանգիստ տալու դեպքում պոկել
նրանց նալերը:

5). Արգելվում է զուգավորման կամպանի
այի նախապատրաստական շրջանում և զու-
գավորման ամբողջ սեզոնում աշխատացնել
կամ նստել այն արտադրող հովատկաներին,
փորոնք ընտրված են զուգավորմանը մաս-
մասնակցելու համար: Զուգավորման սեզո-
նում արտադրող հովատկաներին ամեն որ
1—1 ու կես ժամ պետք է զրոսանքի դուրս
բերել սանձից բռնած:

6). Ստաիվ արգելվում է հղի գամբիկներին
նստելը և ոգտագործելը աշխատանքներում:

7). Արգելվում է փորելի աշխատանքի հա

մար ոգտագործել պետական և շրջանային տոհմա յին մատյանների մեջ գրանցված հովատակներին:

8). Արգելվում է վորելիե աշխատանքի հա մար ոգտագործել մատղաշներին, մինչևիվ 3 տարեկան հասակը, 3 տարվա ձմռան սկզբի քուռակը պետք է վարժված լինիլ և գրա նից հետո, ձմեռը կարելի յե ոգտագործել թեթև աշխատանքների համար անտեսու թյան ներսում:

Ամսվա մեջ մեկ անգամից վոչ պակաս ձի յեր անտեսության մեջ պետք է ստուգման յենթարկվեն, ձիապահների աշխատանքը պետք է գնահատվի բանող և վոչ բանող ձիերի դրության համաձայն:

7. ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱ-
ՏՎՈՒԹՅՈՒՆ ԶՈՈ—ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ
ԿԱՆՈՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.—

1). Այս կանոնների իրագործումը խորհ. անտեսություններում դրվում է դիրեկտոր ների վրա, կոլանտեսական ապրանքային ֆերմաներում՝ կոլանտեսության նախագահ-

ների, ֆերմաների վարիչների, անասնապահական բրիգադիրների և տեխնիկ—անասնապահների վրա, իսկ անհատական ոգտագործման մեջ գտնվող անասունների վերաբերյալ՝ անասունների տերերի, կոլանտեսությունների և գյուղխորհրդի նախագահների վրա:

2). Հիշյալ կանոնների իրագործման դեկավարությունը և հսկողությունը դրվում և Շրջ. հողրաժնի և անասնարուժական Զոտտեխնիկական պերսոնալի վրա:

3). Յուրաքանչյուր անասնարուժական խորհ. տնտեսություն, կոլանտեսություն և գյուղխորհուրդ պետք և ունենան հատուկ մատյան՝ Զոտ—վետ պերսոնալի աչքելումների, անասնարուժական դրության վերաբերվող տվյալների, անասնարուժական Զոտտեխնիկական կանոնների և հիշված անհրաժեշտ ձեռնարկումների կիրառման վերաբերյալ տեղեկությունների պրահյման համար:

4). Հիշյալ կանոնները չ'կատարելու դեպքում հանցավորները վարչական տուժի կարգով յենթարկվում են մինչև 50 ուրլի տու

դանքի կամ 15 որ հարկադիր աշխատանքի
չարամիտ դեպքում յենթարկվում են
Քրեական պատասխանատվության:

Նոգանային Գործադիր Կոմիտեյի
նախագահ՝ Ա. ԹԱԳԵՎԱՍՅԱՆ

Քարտուղար՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038197

(064)

278

A $\frac{1}{3601}$

18401